Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ Էուրոյան, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանոթացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Իմ և Բանկի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են մեր փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկացված եմ, որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Գիտակցում եմ, որ իմ կողմից Բանկի առցանց համակարգում «Ստորագրել» կոճակը սեղմելը և Բանկի առցանց համակարգում գրանցված Հաճախորդի PIN կոդը մուտքագրելը հանդիսանում է իմ կողմից Բանկի թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման օֆերտայի ներկայացում, իսկ իմ հաշվին բավարար միջոցների առկայության դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարելուց հետո Բանկի կողմից պարտատոմսերը իմ դեպո հաշվին արտացոլելը հանդիսանում է Բանկի կողմից իմ ներկայացրած օֆերտայի ակցեպտավորում: Բանկի կողմից իմ օֆերտան ակցեպտավորելու դեպքում սույն հայտ-հանձնարարականը կհանդիսանա իմ և Բանկի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Հավելված 6: «Այդի բանկ» ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի
հետգնման հայտ-հանձնարարական

Հայտը Բանկ ներկայացնելու ամսաթիվը և ժամը

Ժամը

Հայտը ներկայացնողի տվյալները

Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ

(անձնագրի համար)

(տրման ամսաթիվ)

(ռեզիդենտությունը)

Գրանցման հասցեն

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «Այդի բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում մասնակցել Բանկի կողմից թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի հետգնմանը հետևյալ պայմաններով՝

Վաճառվող պարտատոմսերի քանակը (հափ)

(քանակը տառերով)

Վաճառվող պարտատոմսերի վաճառքի գինը

(գինը տառերով)

Վաճառվող պարտատոմսերի վաճառքի դիմաց վճարված ընդհանուր գումարը

(գումարը տառերով)

Անձի բանկային վավերապայմանները
ԱՄՆ դոլարով հաշիվ

ՀՀ դրամով հաշիվ

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը

Արժեթղթերի հաշվի համարը

Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հետգնման առաջարկին և համաձայն եմ դրանում նշված պայմաններին:

Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ

բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկացված ենք, որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով*:

Սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու պահից, այն կհանդիսանա մեր Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Վաճառվող պարտավորումների ԱՄՏԾ

Հեղափոխվող պարտավորումների ընդհանուր քանակը (հազ)

(քանակը տասներով)

Անուն ազգանուն

(ստորագրություն)

Հավելված 7: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևեր

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) =

(Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) =

(Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) =

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) =

Գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) =

Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) =

Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն =

Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր =

Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) =

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ =

(Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) - (Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

Հավելված 8: «Այդի բանկ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ



31 Դեկտեմբերի 2024թ.

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ և
կից ծանոթագրություններ

		01/10/2024	01/01/2024	01/10/2023	01/01/2023
	Ծնթգ.	31/12/2024	31/12/2024	31/12/2023	31/12/2023
		հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	6	8,789,421	31,532,441	7,101,328	25,931,049
Տոկոսային ծախս	6	(2,573,344)	(9,381,978)	(2,032,609)	(7,098,421)
Չուտ տոկոսային եկամուտ		6,216,077	22,150,463	5,068,719	18,832,628
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	7	3,813,450	13,090,630	3,076,786	10,361,438
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	7	(2,670,403)	(9,928,618)	(1,941,648)	(6,863,060)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ/(ծախս)		1,143,047	3,162,012	1,135,138	3,498,378
Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	8	2,488,009	9,296,538	2,748,981	7,460,147
Չուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով	9	(14,673)	528,262	(132,039)	1,069,273
Չուտ իրացված (վնաս)/օգուտ ներդրումային արժեթղթերի գծով		9,807	34,021	3,493	(93,720)
Բաժնետնամանկցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնետնաս	16	225,842	1,073,592	575,245	575,245
Չուտ այլ գործառնական (ծախս)/եկամուտ	10	48,541	(9,648)	201,603	233,476
Գործառնական եկամուտ		10,116,650	36,235,240	9,601,140	31,575,427
Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ	11	(643,898)	(1,630,327)	(211,135)	(382,000)
Անձնակազմի գծով ծախսեր		(3,539,594)	(8,978,307)	(3,190,387)	(7,269,745)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	12	(1,852,180)	(6,441,673)	(1,406,694)	(4,741,784)
Շահույթ մինչ շահութահարկով հարկումը		4,080,978	19,184,933	4,792,924	19,181,898
Շահութահարկի գծով ծախս	13	(612,576)	(3,403,539)	(743,587)	(3,424,768)
Ժամանակաշրջանի զուտ շահույթ		3,468,402	15,781,394	4,049,337	15,757,130
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի					
<i>Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>					
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.					
իրական արժեքի զուտ փոփոխություն	13	118,182	278,572	(53,741)	302,230

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	13	901	(837)	1,681	87,786
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		119,083	277,735	(52,060)	390,016
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ ժամանակաշրջանի համար՝ առանց շահութահարկի		119,083	277,735	(52,060)	390,016
Ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար		3,587,485	16,059,129	3,997,277	16,147,146

Արման Ասատրյան

Վարչության նախագահի փոխարինող,
 Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն
 Փոխարինման հրաման – 46-Ա առ 08.01.2025թ

15 Հունվար 2024

Անուշիկ Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ

«Այրի Բանկ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13

Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն
31 դեկտեմբերի 2024թ.

		31.12.2024թ. հազ. դրամ	31.12.2023թ. հազ. դրամ
	Ծնթգ.		
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	39,104,959	36,606,515
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	18	14,606,422	8,606,787
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	17	62,088,643	63,515,077
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		870,332	449,838
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	15		
- Բանկի կողմից պահվող		15,339,459	10,812,707
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		385,583	
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	15		
- Բանկի կողմից պահվող		46,323,506	54,361,958
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		14,692,076	6,646,146
Հաճախորդներին տրված վարկեր	19	200,859,001	158,884,500
Առգրավված ակտիվներ	19	2,020,530	2,709,765
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	16	7,568,836	7,575,245
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	10,929,352	9,687,175
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	21	3,456,651	3,188,475
Այլ ակտիվներ	22	4,196,520	3,630,008
Ընդամենը ակտիվներ		422,441,870	366,674,196
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	24	17,095,588	8,010,540
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	23	71,711,413	57,310,415
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		-	11,255
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	26	223,020,022	209,920,125
Ընթացիկ հարկային պարտավորություններ		2,073,310	2,258,501
Թողարկված պարտքային արժեթղթեր	25	17,120,222	15,506,851
Հետաձգված հարկային պարտավորություն	13	337,071	442,859
Վարձակալության գծով պարտավորություններ	21	3,799,406	3,415,391
Այլ պարտավորություններ	27	9,340,917	6,313,467
Ընդամենը պարտավորություններ		344,497,949	303,189,404
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	24	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ		397,227	119,492
Զբաղիված շահույթ		38,560,745	24,379,351
Ընդամենը սեփական կապիտալ		77,943,921	63,484,792
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		422,441,870	366,674,196

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	31/12/24	31/12/23
Ծնթգ.	հազ. դրամ	հազ. դրամ
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	30,180,430	26,275,698
Վճարված տոկոսներ	(9,020,022)	(6,746,112)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ	13,090,630	10,361,438
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ	(9,928,618)	(6,863,060)
Չուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով	123,012	272,222
Չուտ մուտքեր արտարժույթով գործառնականություններից	9,692,900	8,288,866
Այլ ստացված եկամուտ	(639,997)	288,183
Վնձնակազմի գծով ծախսերի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(15,748,338)	(9,147,534)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	345,575	678,417
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(6,011,026)	7,293,125
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(8,626,822)	(20,856,671)
Հաճախորդներին տրված վարկեր	(44,174,133)	(38,058,088)
Այլ ակտիվներ	11,002,965	310,025
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)		
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	15,022,979	9,376,019
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	9,085,048	8,007,628
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	18,812,023	18,339,456
Այլ պարտավորություններ	655,927	104,285
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը		
Գործառնական գործունեության համար (օգտագործված) գումար	13,862,533	7,923,897
Վճարված շահութահարկ	(4,125,000)	(4,133,155)
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր		
	9,737,533	3,790,742
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(4,887,524)	(11,910,651)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռք բերում	(46,290,526)	(56,426,143)

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Այդի Բանկ» ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13
 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
 31 դեկտեմբերի 2024թ

Մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից		130,867	9,463,826
Մուտքեր ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի մարումից		45,337,417	65,443,788
Մուտքեր (ներդրումներ) ասոցիացված կազմակերպություններ.		1,080,000	(7,000,000)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,471,667)	(3,493,292)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք		37,252	8,124
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր		(6,064,181)	(3,914,348)
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից		9,265,067	6,208,154
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում		(7,416,253)	(3,982,629)
Մուտքեր ներգրավված միջոցներից		3,678,363	11,517,476
Ներգրավված միջոցների մարում		(3,706,737)	(3,290,975)
Վճարված շահաբաժիններ		(1,600,000)	(11,237,500)
Վարձակալության գծով պարտավորությունների ավելացում(մարում)		387,115	(276,834)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր		607,555	(1,062,308)
Դրամական միջոցների փոփոխության համարժեքների զուտ աճ		4,280,907	(1,185,914)
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(1,783,220)	1,520,173
Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		757	(1,174)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	14	36,606,515	36,273,430
Դրամական միջոցները փոփոխության համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	14	39,104,959	36,606,515

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Այրի Բանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն
31 դեկտեմբերի 2024թ

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Ծենքերի վերագնահատումից աճ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	33,971,850	5,014,099	96,918	(270,523)	19,859,725	58,672,069
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	-	15,757,130	15,757,130
Վնարված շահութաբաժիններ	-	-	-	-	(11,237,500)	(11,237,500)
Այլ համապարփակ եկամուտ						
<i>Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>						
- Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	302,230	-	302,230
- Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	87,786	-	87,786
<i>Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>	-	-	-	390,016	-	390,016
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	390,016	-	390,016
Ժամանակաշրջանի համար			(96,917)			(96,917)
Ծենքերի վերագնահատումից աճի պահուստի հակադարձում						
	33,971,850	5,014,099	-	119,492	24,379,351	63,484,792
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ. (ստուգված)						
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	33,971,850	5,014,099	-	119,492	24,379,351	63,484,792
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	-	15,781,394	15,781,394
Վնարված շահութաբաժիններ	-	-	-	-	(1,600,000)	(1,600,000)
Այլ համապարփակ վնաս						
<i>Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>						
- Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	278,572	-	278,572
- Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(837)	-	(837)
<i>Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>	-	-	-	277,735	-	277,735
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	277,735	-	277,735

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Այդի Բանկ» ՓԲԸ

2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Շենքերի վերագնահատումից աճ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	277,735	-	277,735
Ժամանակաշրջանի համար Մնացորդը առ 31 Դեկտեմբերի 2024թ.	33,971,850	5,014,099	-	397,227	38,560,745	77,943,921

31 Դեկտեմբերի 2024թ. - Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հրապարակվող հաշվետվություն

	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կբ սահմանած Նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	33,971,850	1,000,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	58,883,858	30,000,000	Խախտում առկա չէ
Ն1 ¹ Առաջին մակարդակի հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	18.2%	6.2%	Խախտում առկա չէ
Ն1 ² Առաջին մակարդակի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	18.2%	8.3%	Խախտում առկա չէ
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	19.3%	11.0%	Խախտում առկա չէ
Ն2 ¹ Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	30.9%	15.0%	Խախտում առկա չէ
Ն2 ² Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	76.6%	60.0%	Խախտում առկա չէ
Ն2 ³ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	162.1%	100.0%	Խախտում առկա չէ
Ն2 ³ (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)	347.1%	100.0%	Խախտում առկա չէ
Ն2 ⁴ Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	118.7%	100.0%	Խախտում առկա չէ
Ն2 ⁴ (FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)	189.7%	100.0%	Խախտում առկա չէ
Ն2 ¹¹ Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	40.1%	4.0%	Խախտում առկա չէ
Ն2 ²¹ Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	80.2%	10.0%	Խախտում առկա չէ
Ն3 ¹ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	10.2%	20.0%	Խախտում առկա չէ
Ն3 ² Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	81.3%	500.0%	Խախտում առկա չէ
Ն4 ¹ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	3.6%	5.0%	Խախտում առկա չէ

«Այդի Բանկ» ՓԲԸ

2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ն4 ² Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով դիսկի առավելագույն չափը	11.7%	20.0%	Խախտում առկա չէ
Ն5 ¹ Պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	0.0%	10.0%	Խախտում առկա չէ
Ն5 ² Պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	0.0%	5.0%	Խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը՝ ՀՀ դրամով	X	4.0%	Խախտում առկա չէ
արտարժույթով	X	18%, որից 12% արտ-թով, 6% դրամով	Խախտում առկա չէ
Բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվ՝	2.7%	10.0%	Խախտում առկա չէ
Յուրաքանչյուր արտարժույթի գծով դիրքի նորմատիվ՝ ԱՄՆ դոլարով	1.3%	7.0%	Խախտում առկա չէ
Եվրոյով	0.2%	7.0%	Խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով	1.3%	7.0%	Խախտում առկա չէ
Այլ	X	7.0%	Խախտում առկա չէ

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն (Բանկ) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 1990թ-ին և վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության 2007թ-ին: Նախկինում Բանկն իր գործունեությունն իրականացրել է «Անելիք Բանկ» ՓԲԸ անվանմամբ: 2018թ. հունիսին Բանկը վերանվանվել է «Այդի Բանկ» ՓԲԸ-ի:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկային գործառնությունների իրականացումը, երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների և արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ է:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վարդանանց փ. 13: Բանկն ունի 15 մասնաճյուղ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկի աշխատողների միջին թվաքանակը 2024 թ-ի չորրորդ եռամսյակում կամել է 1,016 մարդ:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ուկրաինայի հետ պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ուկրաինան և Ռուսաստանը Հայաստանի համար կարևոր առևտրային գործընկերներ են:

Պատերազմի արդյունքում գրանցվեց ոչ ռեզիդենտների հոսք (հատկապես Ռուսաստանից) Հայաստան՝ նպաստելով Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից դրամական մուտքերի ծավալների զգալի աճին և պլաստիկ քարտերով գործարքների ակտիվացմանը: Բանկի ղեկավարությունը հետևում է տնտեսական իրավիճակին ներկայիս միջավայրում: Քանի որ պատերազմը դեռ շարունակվում է, անհնար է արժանահավատորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը կարող է ունենալ Բանկի գործունեության վրա, քանի որ ընդհանուր առմամբ անորոշություն կա տնտեսության վրա ազդեցության աստիճանի վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից

(գ) Կորպորատիվ կառավարում

Կորպորատիվ կառավարման սկզբունքներից ելնելով և ղեկավարվելով «Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, Բանկի արդյունավետ ղեկավարման համար գործում է Բանկի Վարչությունը: Բանկի Վարչությունն իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը, կազմակերպում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի, Բանկի Խորհրդի և իր կողմից

«Այդի Բանկ» ՓԲԸ

2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ընդունված որոշումների կատարումը, ապահովում է բանկի խորհրդի կողմից հաստատված ռազմավարական ծրագրի և ներքին ակտերի կատարումը:

Բանկի խորհուրդը, Վարչության աշխատանքների գնահատման համար, հիմք է ընդունում Վարչության Նախագահի, Գլխավոր հաշվապահի, Ներքին վերահսկողության վարչության կողմից խորհրդին ներկայացվող պարբերական հաշվետվությունները և տեղեկատվությունը, ՀՀ կենտրոնական բանկի ստուգման ակտերը, ինչպես նաև արտաքին աուդիտի եզրակացությունը:

Բանկի խորհրդի կազմը

Արթուր Ջավադյան`	խորհրդի նախագահ
Կարեն Մարգարյան`	խորհրդի անդամ
Ֆերնանդո Կաստիլյեիրա`	խորհրդի անդամ
Ելենա Խաչվանքյան`	խորհրդի անդամ
Անդրեաս Բլազե`	խորհրդի անդամ

Բանկի վարչության կազմը

Միեր Աբրահամյան`	Վարչության նախագահ
Կարեն Նալբանդյան`	Բիզնեսի զարգացման գծով տնօրեն, Վարչության անդամ
Արման Ասատրյան`	Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն` Վարչության անդամ
Սերգեյ Առաքելյան`	Թվային Բանկինգի տնօրեն, Վարչության անդամ
Տիգրան Մխիթարյան`	Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, Վարչության անդամ
Արթուր Համբարձումյան`	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ
Լիլիթ Գրիգորյան`	Գործառնական տնօրեն, Վարչության անդամ
Լիլիթ Մարգարյան`	Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ
Անուշիկ Խաչատրյան`	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ

Բանկի բաժնետերեր

Բաժնետեր	Մասնակության չափը (հազար դրամ)	%
«Այդի Գրուփ» ՓԲԸ	33,971,850	100%
Ընդամենը	33,971,850	100%

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 396.56 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 413.89 դրամ 1 եվրոյի համար:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը կատարել է դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի վարկային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող վարկային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և

հաստատում – Ծանոթագրություն 29:

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող վարկային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը - Ծանոթագրություն 29,
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում - Ծանոթագրություն 34.

Կլիմային առնչվող հարցեր

Բանկն իր գնահատումներում և ենթադրություններում ըստ անհրաժեշտության դիտարկում է կլիմային առնչվող հարցերը: Այս գնահատումը ներառում է Բանկի վրա հնարավոր ազդեցությունների լայն շրջանակ՝ պայմանավորված ֆիզիկական և անցումային ռիսկերով: Բանկը կարծում է, որ իր բիզնես մոդելը և պրոդուկտները մրցունակ կլինեն ցածր ածխածնային տնտեսության անցման դեպքում, և հետաքրքիր է, որ կլիմային առնչվող հարցերը չեն հանգեցնում ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր հոդվածի հիմքում ընկած գնահատումների և ենթադրությունների էական անորոշության: Չնայած այն փաստին, որ կլիմային առնչվող ռիսկերը ներկայումս կարող են նշանակալի ազդեցություն չունենալ չափման վրա, Բանկը ուշադիր հետևում է համապատասխան փոփոխություններին և զարգացումներին, ինչպիսին է կլիմայի վերաբերյալ նոր օրենսդրությունը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կամավոր փոփոխություն

2023 Ֆինանսական տարվանից սկսած Բանկը կամավոր փոփոխություն է կատարել Հիմնական միջոցների «հող և շենքեր» կատեգորիայի հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ՝ վերագնահատման մոդելից անցնելով դեպի սկզբնական արժեքի մոդել: Ղեկավարությունը կարծում է, որ սկզբնական արժեքի մոդելն ավելի հուսալի և բովանդակալից ներկայացում է ապահովում օգտագործողների համար՝ հաշվի առնելով նաև, որ շուկայում պրակտիկան խառն է:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է Բանկի կողմից այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների, արժեզրկման և վճարումների մասով մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, որոնց համար որոշում է կայացվում իրական արժեքի հետագա փոփոխություններն արտացոլել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Նման ներդրումների համար վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն են կանխիկ դրամական միջոցները և ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): ՀՀ ԿԲ-ում պահվող արտարժույթով պարտադիր պահուստային ավանդը չի համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների ելքագրումը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

«Այդի Բանկ» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը գեղջում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լրացուցող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

«Այդի Բանկ» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես Ծանոթագրություն 6):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխառվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխառվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վնասներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

«Այդի Բանկ» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՛ հավաքված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

«Այդի Բանկ» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, բանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի 3 տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
